

ՅՈՒՇԵՐՍ Հ. ԱԼԻՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Իբր վերջին մնացորդ Հ. Ալիշանը ճանաչողներու, սիրով կու գամ կատարելու պարտականութիւն մը՝ իր մահուան վաթսրամեակին առիթով:

1889ի Հոկտեմբեր 3ին, տասներկու տարեկան, կը հասնէի Պոլսէն Ս. Ղազար քանի մը ամիս վերջ, 1890ի Մայիս 25ին, տեղի կ'ունենար Հ. Ալիշանի քահանայական յիսնամեայ Յորեկանը, իր երկու դասակիցներով՝ Հ. Աբրահամ ճարեան՝ ծանօթ դրագէտ եւ ճարտար դաստիարակ, ու Հ. Ղուկաս Լազեան՝ քաջ մեքենագէտ. միասին կը տօնէին իրենց յիսուն տարեկանը նուիրական ու բազմադիւն կեանքը: Մենք, փոքր ընծայացունքս, նոյն օրը ճաշարանին մէջ երգեցինք ի պատիւ Հ. Ալիշանի «Արեգակն արդարութեան» Ղեւոնդեանց ու Վարդանանց նուիրուած շարականը: Յնժուլեմամբ կը տրոփէր մեր սիրտը, եւ հայրենիքի սիրոյն կայծը առաջին անգամ կը զգայի իմ մէջս: Գիտէին մեր ուսուցիչները այդ հոգը բորբոքել, երբ նման առիթներուն, վանքի կամարներուն տակ, կամ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի դահլիճին մէջ, ամէն հանգէս կը սկսէր կամ կը փակուէր «Բամ. փորոտան» քայլերով, եւ հրաշունչ այդ բառերուն հեղինակը կը կարծէի թէ ինքնին կը մղէր զիս հայրենանքէն հայկազուններու հետ, յառաջ, յառաջ:

Կը տեսնէի ալեւոր ծերունին մեր մէջ, մեղի հետ, եկեղեցական եւ ուսումնական ամէն հանգէսներուն. ու մենք իր քերթուածներէն կ'արտասանէինք, Տէրունիէն, Հայրունիէն, բան մը աւելցնելով մեր սրտին խորը իր շունչէն. ճաշարանին մէջ ալ, ամպոններէն, երիցագոյն մեր ընկերները կը կարգային «Այրաքառ»էն Ղեւոնդեանց դրուագը՝ Վարդանանց տօնին. ու թօրեայ հոգեւոր կրթութեանց առթիւ՝ հոգեւունջ իր ճառերը. վերջապէս, իր-

մով կը յագեւար մեր հոգին ու միտքը, մինչ ինքը գլխահակ կ'ունկնդէր, ծածկուած երբեմն իր փրկոյնին մէջ: Ուսումնական տարեվերջին մեզի նուէր կը տրուէր՝ Նուագները, Յուշիկները, Շնորհալուստ պարագայ իւր, աշխարհաբար եւ ուսումն իր դրութիւնները, որպէս զի արձակուրդի օրերուն անոնց ընթերցումով դարգանայինք:

Երբ տակաւին Ֆիէսոյի ամարանոցը կ'երթայինք՝ տարեկան մեր արձակուրդի շրջանը անցնելու, իբր ասուպ մը կ'երեւէր Հ. Ալիշան, առաւելապէս շաբաթ օրերը, հոգեւորապէս մեզ պատրաստելու Կիրակի օրուան Ս. Հաղորդութեան. թանկագին էին իր ակնարկութիւնները եւ ամէն բառերը, ուղեցոյց եւ առաջնորդ պատանեկան մեր հասակին:

Նոյն ամարանոցի գլխաւոր կեդրոնի շէնքի երկար սրահին մէջ էր որ յարգարուեցաւ սեղանը, բացառիկ օր մը, եւ Գերպոյ. Կիրեղեան Աբրահամ ու Հ. Ալիշանի յանձնուեցաւ Իրանի Շահին նուիրած չքանչանք, պատուիրակութեամբ Հոռմի դեսպան՝ իշխան Մալգուժ Խանի, նախկին աշակերտ Փարիզի մեր Մուրատեան վարժարանին: Այդ պահուն մեր փոքրիկ մտքերը կ'ընդարձակուէին դէպի հեռաւոր աշխարհներ, ուր Հ. Ալիշան իր համբաւով կը ծաւալէր Մխիթարեան անունը. կը զգայինք որ ան իր անունին մեծութիւնը եւ հմայքը կը կապէր պարզունակ ու խոնարհ կրօնաւորութեանը հետ:

Սքեմառութեան առիթով, 1893ի Նոյեմբերի 26ին, ինչպէս սովորութիւն է փոխել մկրտութեան անունը եւ նոր կեանքին համար ընտրել նոր անուն մը, նոյն ատենուան առաջնորդ հօրս առաջարկած Կոստանդին թագաւորական անունը շատ չքեղ երեւցաւ ինձի, մինչ իմ փափաքս էր Հ. Ալիշանի նախկին անունը կրել, Գերոբէ, յուսալով որ իր հոգին ալ զգենում:

Գիտէի նաեւ թէ իր աշակերտներէն Քուշներեան երկու եղբայրներուն՝ իր եւ իր հարազատին Սերոբէ ու Քերոբէ անունները տալով, առարկայ դարձուցած էր զանոնք իր յատուկ դուրգութեանը:

Քահանայ ձեռնադրութեամբ՝ առիթը կը փնտռէի, թէեւ հազուադէպ, սենեակի առանձնութեան մէջ հետը խօսելու. մեծ էր ամէնուս սէրը եւ յարգանքը իրեն հանդէպ, ու կ'ակնածէինք հանգստեան պահերուն իսկ խանդարել զինքը, երբ սովորէր երազ քայլերով շրջան մը ընել, սպիտակ թաշկինակը անցուցած գլխուն շուրտով՝ մաքուր օդ շնչելու, կամ ձմեռ եղանակին՝ արեւու ջերմութիւնը վայելելու, պահիկ մը, շուտով վերադառնալու համար իր գրեթե:

Սովոր էր, ամառ թէ ձմեռ, առաւօտեան ժամը 4-30ին իջնել եկեղեցի, մոմէ լապտերը վառած, որովհետեւ ելեկտրական լուսաւորութիւնը հասած չէր դեռ Ս. Ղազար: Եւ աշակերտութեան շրջանին, ուրախ էի երբեմն իր պատարագին սպասաւորելու. այդպէս կ'աւելնար իր վրայ հիացումս ու պաշտամունքս:

Առաւօտեան ժամերգութենէն վերջ, ներկայ կ'ըլլար վանքի աշակերտներուն համար մատուցուած սուրբ պատարագին, կատարելով մտաւորական աղօթք կամ հոգեւոր ընթերցում: Աչքերը տկալացած ըլլալով, փոքրիկ մոմ մը կը լուրացած ըլլալով, փոքրիկ մոմ մը կը լուսաւորէր ձեռքն ունեցած գիրքը: Անգամ մը շատ մօտեցուցած ըլլալով ճրագը, բոց առին յանկարծ սպիտակ մօրուքը եւ մաղերը. փութացի անմիջապէս փրկուիլս ծածկել պատկառելի եւ սուրբ գլուխը, աղատելով սիրելի Նահապետը: Կէս ժամ վերջ, նախաճաշիկի պահուն, մօտեցաւ եւ ըսաւ. «Մեծ վտանգէ աղատեցիր զիս այսօր, պարտական եմ քեզի»:

Հակառակ իր առանձնասիրութեան եւ լուսկեցութեան, հետեւող էր հասարակաց կեանքին՝ առանց արտօնութիւն կամ զարտուղութիւն փնտռելու իր անձին համար. խօսուն օրինակ էր ամէնուս: Շատ դժուարին էր կարգաւ իր հոգեւոր խորը,

եթէ վանականներու համար թողած չըլլար իր «Հոգեւոր ճառ»երը, գոհարներու այդ շարքը, որոնք մեր ութօրեայ հոգեւոր կրթութեան ուղեցոյցն էին, նոյն իսկ տպագրութեան առաջ: Քահանայական ձեռնադրութեան մեր ութօրեայ պատրաստութեան ընթացքին՝ ընկերներս ու ես կարօտով կը սպասէինք, որ ամէն երեկոյ գար, փակելու իր հրաբորբոք խրատով նոյն օրուան մեր խոկումները:

Ով որ կը փափաքէ անոր սրտին զգացումներուն մէջ թափանցել, բաւ է որ կարգաւ Արեւաններու համար՝ այրուբեկան կարգով գրած աղօթքները, կամ 1842ին տողած «Օրագիր առժամայն ազգմանց մտաց եւ սրտի» (տե՛ս «Բագմ» 1909-1910):

Խոստակեաց կեանք կը վարէր եւ թրուչունի պէս կը անանէր, աւանդապահ էր սովորութիւններուն եւ պահպանող վանական կարգ ու կանոնին:

Պատահամբ օր մը զիս տեսնելուն, հարցուց թէ հաւանք էի երկաթեայ դարձարուն մեծ դրան, որ փոխանակուած էր վանքի մուտքի փայտեայ հին դրան հետ, աւելցնելով թէ աւելի պանդուկի՝ քան թէ վանքի մը կը յարմարէր այս նորը:

Բնութեամբ կրակոտ, գիտէր սակայն սանձել իր մէջ բռնկող հուրը. ծայր աստիճան փափկանկատ էր եւ զութ ու կարեկից ոչ միայն իր միաբանակիցներուն, այլ եւ հանդէպ թոշուններուն, որոնք վարժած էին զիմեւ ձմեռը իր պատուհանին առջեւ ցանուած հացի փշուրները կտցելու:

Խոնարհ՝ ինքն իր աչքին եւ խուսափող պատիւէ ու գովեստէ, գիտէր պատշաճ ակնարկութիւններով գնահատել իր շուրջը աշխատողներու ջանքը, եւ քաջալերել՝ մանաւանդ ընդօրինակութեամբ ու սրբազրութիւններով իր տպագրութիւններուն օժանդակողները, եւ արդիւնաւոր անձերու յորեկանին կամ անոնց մահուան առիթով, իբր յիշատակ իր յարմար դատած մէկ աշխատութիւնը ընծայել տրպագրութեամբ:

Շատերու հետ, ինքն ալ տարի մը կրի-
փէ բռնուեցաւ, եւ ամիսէ մը՝ խնամքով
ու ամէնուս աղօթքով ոտքի ելաւ. կաղ-
դուրման այդ օրերէն մէկը, երկտա-
սարդներս շուրջը հաւաքուեր էինք՝ մեր
ուրախակցութիւնը յայտնելու. սակայն
Հ. Ալիշան մեզի իբր օրինակ, իր կեանքը
կը համեմատէր մառանին մէջ աշխատող
եղբայր Ալեքսիսի անցուցած անշուք ու
լուիկ կեանքին հետ, նախանձ յայտնելով
թէ ինչո՞ւ ինքն ալ անոր չէ հետեւած:

Այդ ժամանակները չկար կեդրոնական
ընտելիչ. ու Հ. Ալիշան թեթեւ կը հազ-
ուէր եւ չէր ախորժեր սենեակին մէջ
զրուած վառարանը գործածել. կը դողա-
լինք մենք իր առողջութեան վրայ՝ նը-
կատելով յառաջացեալ տարիքը: Անգամ
մը արդէն սրտի տաղնապ անցուցած էր,
եւ հասաւ անխուսափելին:

Կատարեց մեզի հետ Տիրամօր Ընծայ-

ման տօնը, 1901ի Նոյեմբեր 21ին, նոյն
երեկոյ դիտողութիւն ընելով ամէնուս
առջեւ՝ թէ ինչո՞ւ Լիթանիային մէջ «Թա-
զուհի ննջեցելոց» ալ չէ գրուած: Ընթրի-
քէն վերջ, մինչ սենեակին մէջ կը պա-
տրաստուէր հանգչելու, սրտի երկրորդ
տաղնապ մը, շատ աւելի ուժգին տանջեց
զինքը եւ շուրջը գտնուողները մինչեւ ա-
ռաւօտ, պատրաստելով զինքը յաւիտե-
նական հանգստին:

Փոթորկալից օր մը Ս. Ղազարու կըղ-
ղեակին հիւսիսակողմը տնկուած տարի-
քոտ նոճիները մէկ անգամով տապալե-
ցան. անոնց փոխարէն նորեր տնկուեցան,
որոնք բարձրացուցին իրենց գլուխները,
մոռցնելով եղած աւերածը: Սակայն 1901
Նոյեմբեր 22ի փոթորիկը քանդեց մեր
հօյակապ սիւնը՝ Հ. Ալիշանը, որ անփո-
խարինելի մնաց Միաբանութեանս ու Աղ-
զին համար:

Հ. ՔԵՐՈՒՅՆ ՎՐԴ. Ա. ԶՐԱՔԵԱՆ



Վկայական Պատուոյ անդամակցութեան, Ս. Պետրպուրկի Ռուս Կայսերական Հնախօսական
Ընկերութեան կողմէ տրուած Հ. Ալիշանին, 1897 Փետր, 15 քուակամով (ԳԻԻԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ)

ՀԱՆԳԻՍՆԵՐ

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՄՈՆՈԳՐԱՖԻԱ 600 ՄԵՍԿԻՆ ԱՌԹԻԻ

Ս. Զ Ե Ն Ո Ն
Միսիւրաբեան ամսագրոյ
18 Սեպտ. 1961

Միսիւրաբեան ամսագրոյ շաղկերտներու յար-
կարախին գեանաշարիկ կամարակապ դաւիթը վե-
րածուած է բացօթեայ դահլիճի մը, որուն խոր-
քէն, ծաղիկներով ու դալար դրասանդներով հիւս-
ուած շքեղ շրջանակի մը մէջէն՝ կը լսուի հինա-
ւորց ձայն մը խորհրդաւոր:

«Այ մանկտիք, եկէք շուրջ նահապետիս»...

Ալիշանի ոգին, կրկին վերածարձ՝ Միսի-
թաբեան երիտասարդ սերունդի սրտին մէջ, կ'եր-
գէր խանդավառ:

«Թո՛ւ... լըսէ՛ք քմբիկին... քո՛ւպ, քնտան սրտեր-
Հայրենաց է տօն, հայրենաց համբաւ...»:

Հանգչեալ, ի յիշատակ Հ. Ալիշանի մահուան
վաթսամեակին, կազմակերպուած է Միսիթաբեան
դպրեկանքի բարձրագոյն դասերու աշակերտնե-
րէն, համալսարանական ուսանողներ իմաստասի-
րեան եւ աստուածաբանութեան, որոնք, ա-
մանային արձակուրդի շրջանին, հանգստաւէտ
ու զուարթ ընթերցան մէջ, կը նուիրուին հայա-
դիտական ուսումներու եւ կը կազմակերպեն դը-
րական ու գեղարուեստական հանդէսներ:

Հանգչին կը նախագահէ Ուխտիս Ընդհ. Ար-
րահայրը Գերպոյ. Սրապիոն Արքայի. Ուրուհո-
նեան, շուրջ ունենալով Միսիթաբեան Հայրերու
հիւանդանոցը եւ աշակերտութիւնը, Մուրատ Ռա-
փայէլեան վարժարանէն ներկայացուցիչներ եւ
բարեկամ ազգայիններ:

Մուտքի խմբերդէն ետք, որ անմահ Տէր Սա-
հակեանի բառերով կարծէք կ'ողջունէր Նահապետը

«Ձերն է ճամբան արեւու,
Հայաստանի արծիւներ»...

հետզհետէ բեմ բարձրացան երիտասարդ նուիր-
եալները, Ալիշանեան խորհուրդին ձօնելու իրենց
երախայրիքը նուիրական ու սրտայայտ:

Ինչ յուզումով ներկայացուցան մէջ, իր նը-
իր հոգեկան ներքին ապրումներուն մէջ, իր նը-
ւազկոտ ժպիտով, յոյսերու երգով, ցաւի ու վշտի
ճիւղերով, ծովակուտակ փոթորկումներով:

Երիտասարդ ուխտեալի մը կապային տակ՝
թրթռաց դարձեալ Դանիէլ Վարուժանի սիրտը,

իր եւ ամէնուս պաշտամունքի փունջը ձօնելու մեծ
Նահապետին պարզունակ շիրմին:

Կարոյ Զաքարեանի մշակած «Արեւը կայմէ»,
զոր ճարտարօրէն երգեցին մեր աշակերտները,
սարսուռով մեզի յիշեցուց Նահապետին աղեխարշ
տողերը:

Առաւօտուն դռնակն էր բաց,

Ե՛լ, ե՛լ, արեւդ Հայաստանեայց:...

Յաջորդաբար լսեցինք Հ. Վահան Յովհան-
նէսեանի «Ալիշանի պատկերին առջեւ» քերթուա-
ծին զուարթ եւ ողբերգի եղանակաւորումը. ե-
րաժշտութիւն Հ. Ղեւոնդ Վրդ. Տաշեանի:

Հուսկ Ալիշան ինքն էր որ խօսք առաւ, երկու
արտասանողներու անձին մէջ, մեզի ձօնելու իր
հոգիին հրդեհը, իր արցունքներու սափորը, մեռ-
նող կարապի իր վերջին երգը, վերաւոր առիժի
մոնչիւնը, իր Հուսկ Բան առ Ոգին նուագահան
կտորը, գրեթէ ամբողջովին, աշխարհաբար թարգ-
մանութեամբ:

Թէեւ դրարարը մեզի համար շատ աւելի հա-
ճելի ու վսեմ, բայց այդ աշխարհաբար թարգմա-
նութիւնն ալ ունէր իր նորութիւնը:

Հուսկ, ինչպէս ամէն տարի սովորութիւն է,
իրենց ուսումնասիրութիւններն եւ այլ ուսանաւոր
կամ արձակ գրութիւնները ամփոփել՝ իբր կուրթ
աշխարհին՝ թերթի մը մէջ, ձեռագիր, այս տարւան
թիւն ալ, թիւ 41, լոյս տեսաւ, խմբագրականին
ընթերցումով, նուիրուած ամբողջապէս Հ. Ալի-
շանի մահուան վաթսամեակին:

Փակման խօսքը կատարեց Գերպոյ. Արրահայ-
րը, խանդավառ ու ողբերգի շեշտով, եւ յանձ-
նարարեց Միսիթաբեան նոր սերունդին՝ քալել ան-
վարան Հ. Ալիշանի հետքերէն, թռչել անոր նման
արծուօրէն՝ կրօնքի եւ հայրենիքի զոյգ թեւերով

դէպի հորիզոնները սրբութեան եւ գիտութեան:
Վերջալոյսի արեւուն հետ, անգամ մ'ալ ող-
ջունեցինք արեւմտ Նահապետը, որուն ոսկեղօծ
հրապառ աչքերուն մէջ կը տեսնէինք անմար դա-
րունը Հայոց աշխարհին, մինչ իր դողով շրթնե-
րով կարծես դեռ կը կրկնէր:

«Ահա ի գունտն երբայր արեւ,
Նահապետին մեկն տաճք բարեւ: —
Ծեր Նահապետն այլ ձեզ բարեւ:
Աստուած վերէն տայ շատ արեւ»: